

Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները /Ն.Կուն/

Խաղ-վիկտորինա դասի ընթացքում

/Մրցույթը կարելի է կազմակերպել ավելի մեծամասշտաբ տաբեր խմբերի միջև/

Ղասարանը բաժանվում է 3 կամ 4 խմբի, յուրաքանչյուր խումբ անուն է ընտրում թեմային համապատասխան, գրում թղթի վրա և դնում սեղանին:

1 –ին փուլում խմբերի ներկայացուցիչները մոտենում և իրենց ընտրությամբ վերցնում են այդ փուլի համար նախատեսված հարցաթերթիկը / պետք է գտնեն գրական ստեղծագործություններից ընտրված հատվածներում թաքնված աստվածներին կամ հերոսներին/: Սահմանված ժամանակը լրանալուց հետո /2 ր./ խբերը ներկայացնում են իրենց պատասխանները և ստանում համապատասխան միավոր` առավելագույնը` 2:

2 –րդ փուլում նույնպես ամեն խմբից մեկը վերցնում է հարցաթերթը` երկու արտահայտությամբ /պետք է բացատրեն թևավոր խոսքերի իմաստներն ու նշեն առասպելական հիմքերը/: 5 ր. Տրվում է պատրաստվելու համար, այնուհետև ներկայացնում են պատասխանները, ստանում համապատասխան միավոր` դարձյալ առավելագույնը` 2:

3 –րդ փուլում պետք է համադրեն հայկական և հունական դիցարանի աստվածներին: Ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

4 –րդ փուլում խմբերն իրենք են կազմում հարցեր և ուսուցչի կամ վարողի հայեցողությամբ փոխանակում: Ամեն խումբ ներկայացնում է իր ստացած հարցի պատասխանը: Տրվում է 2 միավոր` խելացի և տրամաբանված հարց կազմելու և ճիշտ պատասխանի համար:

Ամփոփվում են արդյունքները, որովհետև հաջորդ փուլին մասնակցելու են միայն առավելագույն միավորներ հավաքած 2 թիմերը, որպեսզի որոշվի հաղթող թիմը:

5 –րդ փուլում 2 խմբերի ներկայացուցիչները այս փուլի համար նախատեսված հացաշարից ընտրում են հարցը և խմբից որևէ մեկը պատասխանում է անմիջապես: Հարցերը շարունակվում են այնքան, մինչև խմբերից մեկը չիմանա իր հարցի պատասխանը:

Կից ներկայացված են խաղ-վիկտորինայի հարցերը:

Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները /Ն.Կուն/

Խաղ-վիկտորինայի հարցերը

1-ն փուլ

1. Մեռած լուսնյակը՝ մենակ ու աղոտ,
Սփռում է շուրջը իր շողերը ցուրտ.
Հավետ լռում է մի տխուր խորհուրդ,
Վառվում է հավետ մի անանց կարոտ...
Ի՞նչ ընդհանրություն կա Տերյանի բանաստեղծական տողերի և հունական դիցաբանության միջև, ո՞քր աստվածուհին է թաքնված այստեղ:
2. Ես անջատված եմ հայրենի հողից,
Հայրենի տունս՝ իմ սրտին օտար.
Ինձ այրում է միշտ մի անհագ թախիծ,
Հավիտյան դյութող անհայտ ճանապարհ...
Հունական դիցաբանության ո՞քր հերոսն է թաքնված տերյանական այս տողերի խորքում:
3. Ֆայտոն նստած՝ անցնեն քուչով, պատուհանից վրես նայես,
Էշխո անքուն սիրտս ընկնի ու լաց ըլիմ մինչև էգուց:
Հունական դիցաբանության ո՞քր հերոսն է թաքնված չարենցյան այս տողերի խորքում:
4. Թող պատգամախոսը հնացած Դելփի
Յուր եռոտանու վրա փրփրի...
Ի՞նչ ընդհանրություն կա բանաստեղծական տողերի և հունական դիցաբանության միջև, ո՞քր աստծո անվան հետ է այն կապված:
5. Հայրենի հողն էր ուժ տալիս քաջին,
Խոսում սրտի հետ՝ դարձնելով նրան միշտ անպարտելի...
Հունական դիցաբանության ո՞քր հերոսն է թաքնված այս տողերի խորքում:

2-րդ փուլ

Բացատրել թևավոր խոսքերի իմաստը, նշել առասպելական հիմքը:

1. աքիլլեսյան գարշապար
2. լեթարգիական քուն
3. ավգյան ախոռ
4. դանայան տակառ
5. սիզիփոսյան աշխատանք
6. տանտալոսյան տանջանքներ
7. արիադնայի կծիկ
8. ոսկեբեր անձրև
9. պրոկրուստյան մահիճ
10. պրոմեթևսյան կրակ

3-րդ փուլ

Նշել տրված աստվածների անունները ըստ հունական և հայկական դիցաբանների.

1. սիրո աստվածուհի
2. մայրության և պտղաբերության աստվածուհի
3. ռազմի և ողջախոհության աստվածուհի
4. աստվածների հայրը
5. ստորգետնյա թագավորության աստված

4- րդ փուլ – խմբերի կազմած հարցերը:

5-րդ փուլ

1. Ի՞նչ են խորհրդանշում նռան հատիկները. Նշել առասպելական հիմքը:
2. Ինչո՞ւ են կարմիր վարդերը սիրո խորհրդանիշ:
3. Ո՞ւր էր այն գեղեցկուհին, որ վերափոխվեց նվագարանի:
4. Ո՞ւր էր այն շնորհալի աղջիկը, որին Աթենասը վերածեց սարդի, և ինչո՞ւ:
5. Ինքնասիրահարված մարդու մասին ասում են, որ տառապում է /նշել հոգեբանական եզրը/. բացատրել առասպելական հիմքը:
6. Ինչո՞ւ են արվեստի բնագավառում հաջողության հասած մարդկանց շնորհում դափնեկրի կոչում:
7. Ինչպե՞ս է Հադեսը առևանգում Պերսեփոնեին:
8. Ո՞ւր էր Դիոնիսոսի մշտական ուղեկիցներից մեկը, որ բարիքներ էր անում հովիվներին, բայց կարող էր և անսպասելի հայտնվելով՝ վախեցնել իրեն անհանգստացնող ճամփորդին: Ի՞նչ արտահայտություն է առաջացել այստեղից:
9. Ո՞ւր է այն գեղանի աղջիկը, որի անունը նշանակում է բազմաշնորհ: Ինչո՞ւ են նրան այդպես անվանել:
10. Ի՞նչ կապ ունի քարտեզների ժողովածուն հունական դիցաբանության հետ: